սանել ի փափագ բաղձանացն, քանզի ժամանակն ձմեռնային էր»[43], վերադառնում է վանք։ Տուն են վերադառնում նաև Արծկեի քահանաները, որոնք իրենց հերթին ուզում էին գնել Տօնականը։ «Եւ մի ամ այլ մնաց գիրքս առ բոծորն այն։ Ապա ի գալ միւս ամին խնդիր արարեալ, թէ գիրքս Ղազարու վանիցն է, զի առաջին գնող այն մեծ եպիսկոպոսն է»[44], Տօնականը վաճառվում է Առաքելոց միաբաններին։ Այս տեղի է ունենում ձեռագիրն ավարտելուց երեք տարի անց, ամռանը. «զի ժամանակն ձմեռնային էր և աւդն դառնաշունչ»[45]։ Այդ ժամանակ գրվում է նշանավոր Հիշատակարանը և ձեռագիրը՝ կազմվում։

«Ի թուականութեան արարչութեանն, որ լինի յիսկզբան լինելութեանն մինչեւ ցայժմ ամք վեցհազարերորդ վեցհարիւրերորդ երեսներորդ (6630), և ի ծննդենէ բանին Աստուծոյ լինի ամք հազար երկերիւր և չորս (1204), եւ ըստ Հայկազեանն տոմարի, որ լինի վեցհարիւրերորդի յիսներորդի և չորրորդ (1205)[46], սկսա կազմել զբազմերանեան շտեմարանս աստուածային գանձուց՝ ի նահանգիս, որ կոչի Ղազարու վանս, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցս»[47]։

Այսպիսով ձեռագիրն ավարտվելուց հետո երեք տարի մնում է Խլաթ քաղաքում և 1205 թ. տարվում է Մուշ, ուրեմն ձեռագիրը գրվել է 1205 թվից երեք տարի առաջ, այսինքն, 1202 թ.։ Ինչպես տեսնում ենք, այս թվականը նախորդի հետ նույնանում է և հաստատում Մատենադարանի № 7729 ձեռագրի գրության տարին՝ 1202 թվականը։

Ե

Իսկ որտե՞ղ է ընդօրինակվել ձեռագիրը, ո՞րն է գրչության վայրը։

Բ. Սարգիսյանը, Գ. Հովսեփյանը և ուրիշներ գրչության վայրը համարում են Մշո Առաքելոց վանքը։ Բայց տեսանք, որ միայն 1205 թ. և հետագայի հիշատակարաններն են գրվել Մշո Առաքելոց վանքում և ոչ ձեռագիրը։ Ձեռագրի այնտեղ գրվելու մասին նույնիսկ ակնարկներ չկան։ Ընդհակառակը՝ փաստերը ցույց են տալիս, որ ձեռագիրը Մշո Առաքելոց վանքում չի գրվել։ Գ. Հովսեփյանը ձեռագրի հիշատակարանի ծանոթագրություններից մեկում վերանայում է իր նախորդ տեսակետը, գրելով. «Ձեռագիրն ամբողջապես չի գրված և նկարազարդված Առաքելոց վանքում, բայց այդ վանքի միաբանների ջանքերով է, որ գրվելուց ոչ ավել, քան երեք տարի հետո, դարձել է Առաքելոց վանքի սեփականություն և պահվել է այնտեղ մինչև 1915 թվականը՝ հավելյալ արժեքավոր հիշատակարաններով։ Գրչության վայրը պարզ չէ, Կարնո՞ւմ, Խլաթո՞ւմ, թէ մի այլ տեղ այդ շրջանի»[48]։

Հիրավի, Առաքելոց վանքի միաբանները ձեռագրի մասին լսում են գրությունն ավարտելուց երկու տարի անց միայն և տեր են դառնում, «զի առա-

43 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 602բ։

44 Անդ։

45 Անդ, 603ա։

46 Գ. Հովսեփյանը գրում է. «Քրիստոնեական և հայկական թվերը համապատասխանում են միմյանց, բայց ոչ Աշխարհի ստեղծագործությանը. կարելի է կարծել, որ ստեղծագործության թվականը պիտի լիներ 6730 և գրիչը սխալմամբ 6630 է գրել՝ Աղեքսանդրի թվականով և ոչ Բյուզանդական։ Այդ դեպքում բոլոր երեք թվականներն էլ համապատասխան կլինեն միմյանց, այսինքն, 6730—5509=1221, 1221—16=1205», (Յիշատակարանք, Ա, էջ 726, ծանոթ. 8)։

47 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 603ա։ Հմմտ. Յիշատակարանք, Ա, էջ 718—719։

48 Յիշատակարանք, Ա, էջ 722, ծանոթ. 3։